ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մայիսի 2015 թվականի թիվ N 90 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ
<<ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ>> ԾՐԱԳՐՈՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ
ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ
<< ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆ >>
ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.12 կետի պահանջներով, 2015թ. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով <<Մշակութային միջոցառումների իրականացում>> ծրագրով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանին հատկացված միջոցների հաշվին <<Հանրապետության տոն>> միջոցառման կազմակերպման նպատակով՝

ո ր ո շ ո ւ մ ե մ.

1. 2015թ. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով <<Մշակութային միջոցառումների իրականացում>> ծրագրով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանին նախատեսված միջոցներից 375.0 հազ. դրամ գումարն ուղղել <<Հանրապետության տոն>> միջոցառման կազմակերպմանը:
2. Հանձնարարել Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Կ. Նազարյանին <<Հանրապետության տոն>> միջոցառումը կազմակերպել ՀՀ Տավուշի մարզպետի կողմից հաստատված ծրագրին համապատասխան:
3. Որոշման կատարման հսկողությունը դնել Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Կ. Նազարյանի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

2015թ. մայիսի 27
ք. Իջևան